

ԿԱՐԾԻՔ

Քիրքոր Հարության Վահեի Ուզունյանի «Հին Կտակարանի մարգարեական մեջբերումները Նոր Կտակարանի համատեքստին մեջ (պատմագիտական, բնագրագիտական եւ մեկնողական արդի վերլուծություն)» թեկնածուականատենախոսության մասին

Ատենախոսությունը բաղկացած է «Ներածություն», «Գլուխ Առաջին. Մարգարեության բնույթը եւ պատմական հենքը». «Գլուխ Երկրորդ. Հին Կտակարանի մարգարեությունները Նոր Կտակարանի մեջ». Գլուխ Երրորդ. Մարգարեական ընտրուած որոշ մեջբերումներու վերլուծություն» , «Եզրակացություններ» և «Հաւելուած» բաժիններից:

«Ներածության» մեջ ուրվագծվում է ատենախոսության ընդգրկած խնդիրների ընդհանուր պատկերը, ինչպես նաև գնահատականը տրվում հայաստվածաշնչագիտության ներկա վիճակի, գործնական առաջարկներ արվում դրանց կիրառությունն առավելագույնս դյուրացնելու համար: Ըստ այսմ Ներածության մեջ, մասնավոր կետերում կանխանշված են մի շարք պատմաբանասիրական մոտեցումներ ու մեթոդաբանական եղանակներ, որոնք օգտագործված են ատենախոսության մեջ:

Ատենախոսության Առաջին գլխում հեղինակը ծանրանում է բուն խնդրի՝ մարգարեությունների վրա: Այս երևույթը խորությամբ լուսաբանելու նպատակով նա գլուխը ստորաբաժանում է հետևյալ ենթագլուխների մեջ. ա/ «Մարգարեություններու պատմական վավերականության կարևորությունը», բ/ «Մարգարեություն եւ մարգարե», գ/ «Մարգարեություններու պատմական հենքը», դ/ «Մարգարեներու ժամանակաշրջանը», ե/ «Մարգարե և տեսանող բառերու գործածությունը», զ/ «Մարգարեության տեսակները», է/ «Մարգարեություններու գործնական տեսակները»: Այս բաժիններում նյութերը խմբավորված են գլխավորաբար պատմագիտական և բանասիրական ուսումնասիրության տրամաբանությամբ ու թելադրանքով: Աչքի առջև ունենալով աստվածաշնչագիտության ներկա նվաճումները՝ Ուզունյանը ներկայացնում է մարգարեների ապրած ժամանակաշրջանը և փորձում որոշարկել նրանց կյանքի ու գործունեության հիմնական հանգրվանները:

Ատենախոսության Երկրորդ գլխի առաջին ենթաբաժնում ուրվագծվում են գլխում արծարծված հիմնական թեմաները, այն է՝ մարգարեությունների ներկայությունը Ավետարաններում, Գործք առաքելոց-ում, Պողոս առաքյալի

թղթերում, Յոթ Ընդհանրական թղթերում և Հովհաննու Հայտնության գրքում: Ատենախոսն այստեղ հարկ է նկատում տալ յուրաքանչյուր դրվագում ներկա մարգարեական կանխասացության աստվածաբանական խտացումը . այսպես Մատթեոսի Ավետարանում դա «խոստացեալ Քրիստոս» է, Մարկոսի Ավետարանում՝ «Տառապանքի ճամբան եւ մեսիական գաղտնիքը», Ղուկասի Ավետարանում՝ «Փրկության պատմությունը», Հովահաննեսի Ավետարանում՝ «մարմնացյալ խոսքը»: Եթե ավետարանները վկայում են Քրիստոսի փրկագործությամբ կյանքի կոչված մարգարեությունների մասին, ապա Գործք առաքելոցը հաստատում է, թե այդ շարունակվում է իրականա՞նալ եկեղեցու պատմության ընթացքում (էջ 55): Իբրև այս մտածումի հավաստում բերվում են Պետրոս և Պողոս առաքյալների՝ մարգարեություններից քաղված մտածումները: Ատենախոսն իրավացիորեն կարծում է, թե «մարգարեական խօսքերու տառացի յիշատակումը, փոխանցումը եւ մեկնաբանութիւնն ինքնին նոր երեւոյթն մըն է» (էջ 55), այնուհետև եզրակացնում, թե «Եկեղեցին ոչ միայն կը շարունակէ մարգարեական ժառանգութիւնը, այլ կը դառնայ այն վայրը, որտեղ մարգարեութիւնը կը կատարուի ներկայի եւ ապագայի մէջ» (էջ 56):

Մարգարեական անդրադարձները բավական հանգամանալից ներկայացված և լուսաբանված են պողոսյան թղթերում: Հեղինակը ծանրանում է մարգարեական անդրադարձներով հարուստ վեց թղթերի լուսաբանման վրա՝ հետևյալ պատշաճ խտացումներով: Թուղթ առ Հռովմայեցիս՝ «արդարութիւն հաւատքով», Կորնթ. Ա թուղթը՝ «հոգեւոր շինութիւն», Կորնթ. Բ թուղթը՝ «ծառայութիւն եւ փառք», Գաղատ. թուղթը՝ «ազատագրող շնորհք», Եփես. թուղթը՝ «Քրիստոս եւ եկեղեցի», Եբրայեց. թուղթը՝ «քահանայապետական գագաթ»: Ատենախոսը անդրադարձել է նաև Ընդհանրական թղթերում առկա, թող որ սակավաթիվ, մարգարեական գուգորդումներին: Այսպես, Հակոբոսի թղթի միտք բանին «գործնական ճշմարտութիւնն» է, Պետրոսի Ա թղթինը՝ «տոկութիւն տառապանքին մէջ», Պետրոսի Բ թղթինը՝ «մարգարեական լոյս», Հովհաննեսի երեք թղթերինը՝ «սէր, ճշմարտութիւն, հիւրընկալութիւն», Հուդայի թղթինը՝ «զգուշացում»: Ի տարբերություն պողոսյան թղթերի Ընդհանրական թղթերում մարգարեական տեղիները չեն մեկնաբանված, այլ «զանոնք կը յիշեցնեն իբրեւ օրինակներ՝ հաւատքի, տոկունութեան եւ յուսալի սպասումի» (էջ 68): Հովհաննու Յայտնության գրքում ներկա մարգարեական տեղիները հայտորոշում են «մարգարեութիւններու վերջնական կատարումը»: Սացույց է տրված առարկայորեն հավաստի զուգահեռներով (էջ 68-70):

Ատենախոսության Երկրորդ գլխում գիտական առանձին հետաքրքրությամբ աչքի է ընկնում «Մարգարեութեանց երկակի կատարումը» ենթաբաժինը, ուր կարգորոշված է երկու բնույթի մարգարեություն. մեկն իրականանում է մերձավորագույն ապագայում, այն է՝ հինկտակարանյան իրականության մեջ

(ժամանակավոր), իսկ մյուսը հեռավոր ապագայում՝ Նոր Կտակարանում: Ավարտելով այս բաժինը՝ ատենախոսը նկատում է. «Մարգարեություններու մեկնաբանութեան համար փոքր, բայց յստակ նախագետին մը կարողացանք պատրաստել, ու ցոյց տուինք մեկնութեան համար անհրաժեշտ որոշ նախատուեալներ» (էջ 47):

Ատենախոսութեան Երրորդ գլուխը նպատակ ունի գործնականում ցոյց տալ մարգարեությունների հետահար կատարումը Նոր Կտակարանում՝ մասնավորաբար Մատթեոսի Ավետարանում՝ դրանց ներկայության արձանագրումով: Այս նպատակին հետամուտ ատենախոսն իբրև երևոյթի բացահայտման պատշաճ օրինակներ, կանգ է առնում Մատթեոսի Ավետարանի յոթ համարների վրա (Բ 15=Ովս ԺԲ, Գ 3 = Ես. Խ 3, Դ 15-16 = Ես. Թ 23-Ը 1, ԺԲ 18-21 = Ես. ԽԲ, ԻԱ 5 = Ես. ԿԲ 11 և այլն): Սուրբգրային յուրաքանչյուր տեղի քննվում է «տարբեր մոտեցումով և նպատակով» (էջ 77): Համեմատվում են եբրայերեն, հունարեն և հայերեն բնագրերը: Վերհանվում են վկայաբերվող մարգարեությունների միջավայրը, պատմական ժամանակաշրջանը և այլ պարագաներ, որոնք օգնում են պարզաբանելու դրանց վկայակոչման շարժառիթը: Սա թույլ է տալիս բացահայտել մարգարեությունների շարադրման ժամանակաշրջանի անցուդարձը, պատճառներն ու պայմանները, որոնք իրենց հերթին հնարավորություն են տալիս ճիշտ ընկալել մարգարեությունների հինկտակարանյան մթնոլորտն ու նպատակը: Ցույց է տրվում, թե մարգարեությունները կատարվում են ոչ միայն ապագայում, այլև՝ դրանց շարադրման օրերին: Ատենախոսն անդրադառնում է եբրայերեն բնագրի, հունարեն և հայերեն թարգմանությունների, տվյալ տեղիի կամ համարի ավետարանական վկայության բնագրային առանձնահատկություններին: Բնագրագիտական շահեկանությամբ աչքի է ընկնում մասնավորաբար Մատթեոսի Դ 15-16-ում վկայաբերված Ես. Թ 23 – Ը 1 տեղիի քննությունը: Աստածաշնչագիտական դիտարկումների, հայրախոսական բնագրերի ընդգրկման շնորհիվ ատենախոսության հեղինակը միանգամայն հավանական է համարում, թե «արբ» ընթերցումը, որ այսօր բացակայում է եբրայերեն բնագրում և տարաբնույթ թարգմանություններում, եղել է մեկնիչ հայրերի ձեռքի տակ գտնվող այլալեզու ձեռագրերում, և այդ վաղնջական ընթերցումը տեղ է գտել ու պահպանվել միայն հայերեն թարգմանության մեջ:

Ատենախոսության այս գլխում աստվածաշնչագիտական, քրիստոսաբանական մասնավոր հետաքրքրություն է ներկայացնում Մատթեոս Ա 23-ում վկայակոչված Ես. Է 14, Ը 8, 10 քաջ հայտնի տեղիի քննությունը: Հաշվի առնելով խնդրո առարկա տեղիի աստվածաբանական բացառիկ կարևորությունը, այդ քննությունն իրականացվում է երեք պահերի հաշվառումով. ա/ Ո՞վ է , որ Մանկանն Էմմանվել է անվանում», բ/Այս

մարգարեության մեջ հիշատակված Կույսը ի՞նչ է նշանակում, գ/ եթե մարգարեությունը Քրիստոսի մասին է՝ ինչու՞ նա էմմանվել չանվանվեց, այլ՝ Հիսուս: Այս հարցադրումները պայմանավորված են իրողությունն ընդգրկող երեք կարևոր պահերով: Եբրայերենը, հունարենը և նորկտակարանյան վկայությունը իմաստով լիովին համերաշխ են իրար: Այս կետում հեղինակը մասնավոր քննության նյութ է դարձնում այն պարագան, թե ո՞վ է այս խոսքը («Ահա կոյսն յղասցի եւ ծնցի որդի, եւ կոչեսցեն զանուն նորա Էմմանուէլ») ասողը: Հայերենը թե՛ Եսայու, թե՛ Մատթեոսի մեջ կիրառում է «կոչեսցեն» ձևը: Մինչդեռ եբրայերենի «կոչեսցե» բայաձևը, որն իգական սեռի եզակի երրորդ դեմք է, ակներևորեն ցույց է տալիս, որ այդ խոսքն արտաբերողը կոյսն է: Ատենախոսը սա համարում է բավականաչափ տրամաբանական, և ըստ այսմ ենթադրում, թե հայերեն թարգմանության «կոչեսցեն»-ը տվյալ տեղին «Նոր կտակարանի հետ յարմարցնելու խմբագրութիւն մըն է» (էջ 109): Առաջին հարցումի պատասխանն ինքնին թելադրում է հստակ պատասխան տալ երկրորդ հարցումին՝ որոշարկելու համար «կոյս» բառի իմաստը: Գոնե որոշակի ենթադրության համար ատենախոսը անհրաժեշտ է համարում պարզել Եսայու մարգարեության շարադրման մոտավոր ժամանակն ու վայրը: Սրանից հետո օրինաչափ հարց է առաջանում, թե ո՞վ է մարգարեության մեջ հիշատակված կույսը: Ատենախոսն ոչ առանց անհրաժեշտության մասնահատուկ քննության նյութ է դարձնում Հին կտակարանում հանդիպող «աղջիկ» (=ալմա) և «կույս» բառերը, հստակորեն զանազանում դրանք՝ հաշվի առնելով Աստվածաշնչի եբրայերեն բնագրում և հունարեն Յոթանասնից թարգմանության մեջ դրանց կիրառման առանձնահատկությունները: Նա ընդունելի է համարում եբրայերենում ներկա «աղջիկ» չեզոք ընթերցումը, որ, ինչպես նկատվում է «իմաստի յստակեցում պետք է ընդունիլ» (էջ 112): Խնդրի պարզաբանմանն իր նպաստն է բերում մարգարեության մերձավորագույն և հեռավորագույն կատարման վերաբերյալ հեղինակի առաջ քաշած տեսությունը, ըստ որի «աղջիկ» կամ «մանկամարդ» աղջիկ ընթերցումը վերաբերում է Եսայու ապրած շրջանին, իսկ «աղջիկ» բառի «կույս» իմաստը՝ մարգարեության հեռավորագույն կատարմանը, այսինքն՝ կույս Մարիամին¹:

Ատենախոսության «Եզրակացություններ» բաժնում 19 կետերի մեջ իմի են բերված կատարված ուսումնասիրությունների հիմնական արդյունքները: Այստեղ շեշտվում է այն պարագան, թե ներկա «ուսումնասիրութիւնը նաեւ հնարաւորութիւն կընձեռէ ապագայ հետազօտութիւններու համար նոր թեմաներ առաջադրելու» (էջ 119):

¹ Ի դեպ այս կապակցությամբ նկատառելի է թվում Հակոբ նալյան պատրիարքի (+1764) հետևյալ դիտումը. «զԿինն անունն աստուածային Սուրբ Գիրն կնքէ ի վերայ կուսի եւ առնակնոջ». տե՛ս «Կրթութիւն աստուածաբանական զխորհրդոցն եկեղեցւոյ», աշխտ. Յ. Քեօսեկանի, Ս. Էջմիածին, 2024, էջ 177:

Ատենախոսության «Սուրբ Գրոց բնագրագիտական քննութեան մասին» խորագրով «Հաւելուած» բաժնում, հենվելով արդի աստվածաշնչագիտության ձեռքբերումների վրա՝ ատենախոսը կատարել է Աստվածաշնչի բնագրագիտական ընդհանուր քննությունը՝ նախ ներկայացնելով աստվածաշնչական հնագույն հրատարակությունները, եբրայական (մասորական) բնագիրը, Սուրբ Գրոց եբրայերեն ձեռագրերը, «եբրայերեն հրատարակությունները, Հին Կտակարանի յունարեն (Յոթանասնից) բնագիրը», Հին Կտակարանի հունարեն հրատարակությունները, Նոր Կտակարանի հունարեն բնագիրը, Աստվածաշնչի հայերեն բնագիրը, Գրաբար Աստվածաշնչի գիտական հրատարակությունները: Ատենախոսն այս գլխում կարևոր է համարում շեշտել աստվածաշնչական տարալեզու բնագրերը մեկմեկու հետ համեմատելու անհրաժեշտությունը, ներթափանցելով վեր հանելու բնագրային առանձնահատկությունները և օրինաչափությունները: Բաժնում տրված է նաև բնագրերի մատենագիտական տեսությունը՝ պատմական հակիրճ անդրադարձների ուղեկցությամբ:

Ցավոք ատենախոսությունն ազատ չէ մի շարք թերություններից ու թերացումներից.

ա/ Բնագրագիտական հետախուզումների մեջ գրեթե բացակայում է ասորերեն ու լատիներեն թարգմանությունների հետ զոնե հայանցիկ համեմատությունը:

բ/ Ատենախոսը փորձում է արձանագրել Աստվածաշնչի եբրայերեն բնագրի և հայերեն թարգմանության համաձայնության դեպքեր (էջ 79, Յաւելուած, էջ XXV): Մինչդեռ հայրենի աստվածաշնչագիտությունը տակավին 100 տարի առաջ հաստատել է, որ հայերենը ոչ մի հարաբերություն չունի եբրայերենի հետ (վկա Ֆ. Մակլերի ու Եղիշե պատրիարք Դուրյանի հետազոտությունները. «Հանդես ամսօրեայ», 1927, «Միոն», 1929): Ուստի մատնացուցված նմանություններն օրինաչափ չեն, այլ թերևս բացատրելի են պատահականությամբ կամ ասորերենի ազդեցությամբ:

գ/ Խոսելով Մատթեոսի Ավետարանում մարգարեություններից բերված վկայությունների մասին՝ ատենախոսը մասնավոր նկատառումով կանգ է առնում աստվածաշնչագիտության մեջ լայնորեն քննարկված Մատթեոսի Ավետարանում (Բ 15) Ովսեի մարգարեության ԺԱ 1-ից քաղված վկայության վրա (էջ 82): Իրավացիորեն ցույց է տրվում, որ Մատթեոսի Ավետարանում կիրառված է ոչ թե հունարեն Յոթանասնից թարգմանությունը, այլ՝ եբրայերեն բնագիրը: Այսօր քննության նյութ դարձած այս իրողությունը, սակայն, նկատել և արձանագրել է մեզանից 1300 տարի առաջ Ս. Գրոց հայ մեկնիչ Ստեփանոս Սյունեցին իր Քառավետարանի մեկնության մեջ, ուր կարդում ենք. «Ի Յովսէէ ըստ Եւթանասնիցն գրեալ է այսպէս. «Տղայ եղեւ, սիրեցի զնա եւ յԵգիպտոսէ կոչեցից զորդեակս նորայ», իսկ Ակիւղասս .«Առ աւուրն

լռեաց թագաւորն Իսրայէլի եւ սիրեցի զնա, եւ յեզիպտոսէ կոչեցից զորդի իմ», վասն զի Մատթէոս եբրայեցերէն գրեաց զաւետարանս, եւ որ թարգմանեաց, ըստ եբրայականին եղ զվկայութիւնդ» (տե՛ս «Մատենագիրք հայոց», հտ.Զ, էջ 157 [8]):

դ/ Ատենախոսը բացառապէս կիրառում է արդի աստվածաշնչագիտության տվյալները: Մինչդեռ ականարկ իսկ չի արված այն մասին, թե, օրինակ, պողոսյան թղթերում վկայակոչված մարգարեական տեղիների մատենագիտությունը կազմվել է տակավին Եվթաղ Ալեքսանդրացու կողմից Ե դարում, հայացվել նույն դարում, և ի սպաս դրվել հայ միջնադարյան աստվածաշնչագիտությանը :

ե/ Չեն հիշատակված և չեն կիրառված տակավին անտիպ հայերեն սուրբգրային մեկնությունները, որոնք կարող էին օգտակար լինել այս կամ ինդրի լուսաբանմանը:

Հիշյալ թերություններն ամեննիլ էլ չեն արժեզրկում կատարված աշխատանքը: Դրանք դյուրությամբ հաղթահարելի են ատենախոսությունը հրատարակության պատրաստելիս:

Ք. Ուզունյանի «Հին կտակարանի մարգարեական մեջբերումները՝ Նոր կտակարանի համատեքստին մեջ (պատմագիտական, բնագրագիտական և մեկնողական արդի վերլուծություն)» թեկնածուական ատենախոսությունն արտացոլված է սեղմագրում, իսկ հեղինակի հրատարակած գիտական հոդվածները ներկայացված են ատենախոսության մեջ:

Հենվելով ասվածի վրա՝ արձանագրելի է, թե կատարված աշխատանքը բավարարում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, իսկ Քիրքոր Վահեի Ուզունյանն արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին, որի համար երաշխավորում եմ Երևանի Պետական Համալսարանում գործող ԲՈԿ-ի մասնագիտացված խորհրդի առջև:

ՀԱԿՈԲ ՔՅՈՍԵՅԱՆ

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆ.

Մաշտոցի անվան Մատենադարանի ավագ գիտաշխատող

03.10.25

Տաշեւաշատի ավագ գիտաշխատող, պ. Գ. Գ., պրոֆ.
Լուսին Կոստանյան, ազգայնագրություն, հասցեացուած ԵՄ՝
Տաշեւաշատի պնօրենի գիտաշխատող Գեորգի Կոնյանյան,
պ. Գ. Բ. Լ. Բոգոյան ԲՈԿ

